

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը տեղեկատվություն է ներկայացնում 2009 թվականի հունվար – դեկտեմբերին երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2009թ. հունվար - դեկտեմբերի արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները


	Չափի միավոր	2009թ. հունվար-դեկտեմբեր	2009թ. հունվար-դեկտեմբերը 2008թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2009թ. դեկտեմբերը նոյեմբերի նկատմամբ, %
Համախառն ներքին արդյունք				
շուկայական գներով	մլն. դրամ	3165538.1	85.6	118.3 ¹
հիմնական գներով ²	մլն. դրամ	2833080.3	86.3	x
ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատոր (ընթացիկ և համադրելի գներով ՀՆԱ-ի ծավալների հարաբերակցությունը)	%	x	101.5	x
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	մլն. դրամ	663921.1	92.2	108.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման	մլն. դրամ	532564.0	93.6	x
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	մլն. կՎտ. ժամ	5671.2	92.8	106.3
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը	մլն. դրամ	555698.1	99.9	106.3
Շինարարության ծավալը	մլն. դրամ	575709.3	63.6	114.8
Արտաքին առևտրաշրջանառությունը	մլն. դոլար	4001.9	73.0	96.6
այդ թվում՝	մլրդ. դրամ	1466.8	x	x
արտահանում	մլն. դոլար	697.8	66.0	101.8
Ներմուծում	մլրդ. դրամ	256.7	x	x
Ներմուծում	մլն. դոլար	3304.1	74.7	95.6
մլրդ. դրամ	մլրդ. դրամ	1210.1	x	x
Միջին ամսական անվանական աշխատավարձը	դրամ	101895	109.8	127.5
Մանրածախ առևտրի շրջանառությունը	մլն. դրամ	1075073.9	101.0	170.9
Ծառայությունների ծավալը (առանց առևտրի)	մլն. դրամ	768910.3	101.3	149.3
Սպառողական գների ինդեքսը	%	x	103.4	102.0

¹ Ընթացիկ գներով (անվանական աճ):

² Հիմնական գներով ՀՆԱ-ն, ի տարբերություն շուկայական գներով ՀՆԱ-ի, իր մեջ չի ներառում արտադրանքի հարկերը, բայց ներառում է արտադրանքի սուբսիդիաները:

Ստորև բերվում են գծանկարներ (ռադարներ), որոնք նկարագրում են ապրանքների և ծառայությունների արտադրության հիմնական ցուցանիշների փոփոխությունները.

Ապրանքների և ծառայությունների արտադրության հիմնական ցուցանիշների փոփոխությունները 2009 և 2008թթ. դեկտեմբեր ամիսներին



Ապրանքների և ծառայությունների արտադրության փոփոխությունները 2009 և 2008 թթ. հունվար-դեկտեմբերին

(նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %)

